ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

20 դեկտեմբերի 2019 թ.

«ԴԵՊԻ ՀԱՅՔ» Հիմնադրամը (այսուհետ՝ **Հիմնադրամ**), ի դեմս գործադիր տնօրեն Սևան Կաբակյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ) (այսուհետ՝ Գործընկեր), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, ով գործում է ՇՊՀ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (Հիմնադրամը և Գործընկերը միասին այսուհետ՝ Կողմեր, առանձնաբար՝ Կողմ), կնքեցին սույն Համաձայնագիրը, որով Կողմերը պայմանավորվում են ներքոհիշյալի մասին:

1. Հիմնադրամի կամավորները սույն պայմանավորվածությունների շրջանակում կարող են ԱՅՑԵԼԵԼ Գործընկերոջ տնտեսություն՝ ծանոթանալու վերջինիս տնտեսական գործունեության հետ:
2. Կամավորները Գործընկերոջ մոտ կարող են մնալ այն ժամանակահատվածում, որ ժամկետով գրանցվել են Հիմնադրամում:
3. Կամավորները չեն կարող շահագործվել ինչպես Հիմնադրամի, այնպես էլ Գործընկերոջ կողմից:
4. Կամավորների վրա չի տարածվելու Գործընկերոջ աշխատանքային ռեժիմը, սակայն Կամավորները պարտավոր են Գործընկերոջ մոտ պահպանել էթիկայի բոլոր կանոնները:
5. Հիմնադրամի Կամավորները Գործընկերոջ մոտ գտնվելու ողջ ժամանակահատվածում կհամարվեն ԱՅՑԵԼՈՒՆԵՐ:
6. Կամավորները Գործընկերոջ մոտ գտնվելու ողջ ժամանակահատվածում չպետք է միջամտեն և խոչընդոտեն գործընկերոջ բնականոն աշխատանքը:
7. Կամավորները Գործընկերոջ մոտ գտնվելու ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև հետո, չեն կարող պատասխանատվություն կրել Գործընկերոջ պարտավորությունների համար:
8. Սույն Համաձայնագիրը մտնում է ուժի մեջ ստորագրման օրվանից և գործում է՝ մինչև Կողմերից մեկը մյուսին չի հայտնում իր՝ սույն Համաձայնագիրը լուծելու ցանկության մասին, գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ:
9. Համաձայնագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

ԿՈՂՄԵՐԸ պարտավորվում են, որ սույն Համաձայնագրի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածությունները կկիրառեն պատշաճորեն՝ պահպանելով միմյանց նկատմամբ առկա փոխադարձ վստահությունը:

Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հիմնադրամ՝	Գործընկեր՝
«ԴԵՊԻ ՀԱՅՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 37	Հասցե՝ ք. Գյումրի, Պ. Սևակ 4
ՀՎՀՀ՝ 02574662	ՀՎՀՀ՝ 05502348
Հ/Հ՝ 19300 45031760100	Հ/Հ՝ 11802024816700
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Գյումրիի մ/ճ
Գործադիր տնօրեն՝	Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝
Սևան Կաբայյան _____	Երվանդ Սերոբյան _____
Կ.Տ.	Կ.Տ.